ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՄՍԱԳԻՐԸ

Նոյեմբերի 24-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ նվիրված Գիտությունների ակադեմիայի անդրանիկ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի 65-ամյակին: Նիստին ներկա էին հանրապետության հասարակական գիտությունների ճանաչված ու անվանի գործիչներ, ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունքի ինստիտուտների տնօրեններ, փոխտնօրեններ և գիտաշխատողներ:

Հանդիսավոր նիստը ներածական խոսքով բացեց ԳԱԱ փոխպրեզիդենտ, հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Վ. Բարխուդարյանը՝ արժեքավորելով «Լրաբերի» տասնամյակների վաստակը հասարակագիտության ու հայագիտության զարգացման ասպարեզում:

Ամսագրի 65-ամյա անցած ուղու մասին հանգամանալից ու բովանդակալից խոսք ասաց «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի գլխավոր խմբագիր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Խառատյանը: Նա նշեց, որ Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի պարբերականների առաջնեկը «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագիրն է, որն իր ծննդյան օրից՝ 1940 թվականից, եղել է հանրապետության գիտական մտքի առաջատար ամբիոններից մեկը: Սկզբնապես՝ 1940 թ. մինչև 1943 թ. «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագիրը կոչվում էր հասարակական ու բնական գիտությունների «Տեղեկագիր» (ԽՍՀՄ ԳԱ նախագահության հայկ. մասնաճյուղի), մինչև 1965 թ. դեկտեմբերը՝ «Տեղեկագիր հասարակական գիտությունների»: 1966 թ. ամսագիրը վերանվանվեց «Լրաբեր հասարակական գիտությունների»: Գիտնականների ավագ և միջին, իսկ վերջին տասնամյակներին նաև երիտասարդ սերնդի ներկայացուցիչների համար միշտ էլ պատիվ է եղել «Լրաբերում» տպագրվելը: 1000–1500 տպաքանակով երկլեզու (հայերեն և ռուսերեն) ամսագիրը տարածվում էր ոչ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս: Այսօր թեև նվազել է տպաքանակը, և այն չի հասնում 300-ի, սակայն իր հաստատուն ավանդույթներն ունեցող արդեն ուշ եկող, բայց ժամանակին հայտնվող քառամսյա ամսագիրը հասնում է իր ընթերցողներին աշխարհի տարբեր երկրներում, որտեղ հայ գիտական մտքով հետաքրքրվող կա, կարելի է գտնել հանգեսի ներկայությունը: 65-ամյա ճամփան հիշելու և հպարտանալու բազում հանգրվաններ է ունեցել հանգեսը, շարունակեց Ա. Խառատյանը, սակայն այն ունի նաև խնդիրներ, որոնք այսօր պետք է լուծել: Ամսագրի երկլեզու վիճակը չի բավարարում այսօրվա գիտական պահանջները: Ստացվում է այնպես, որ մենք գրում, մենք էլ կարդում ենք: Սակայն եթե տպագրվեն նաև այլ լեզուներով հոդվածներ, կմեծանա ամսագրի մասսայականությու-

նը, ինչպես և տարածման շառավիղը՝ արտասահմանում: Քառամսյա ամսագիրը եռամսյա հանդես դարձնելով, կարելի է կարծել, կլուծվի հրապարակվող հոդվածների հրատապության խնդիրը: Որակական նոր փոփոխություններով գլխավոր խմբագիրը ցանկանում է «Լրաբերը» տեսնել որպես միջազգային հայագիտական-հասարակագիտական հանդես:

«Լրաբերի» 65-ամյակի առթիվ իրենց ողջույնի և շնորհավորական խոսքերն ասացին ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն Վ. Խոջաբեկյանը, Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Ն. Հովհաննիսյանը, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Ա. Քալանթարյանը, ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների դոկտոր Գ. Անանյանը, Պատմության ինստիտուտի տնօրենի տեղակալ, պատմական գիտությունների թեկնածու Գ. Գրիգորյանը, Արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության թեկնածու Ա. Աղասյանը, ՀՀ ԳԱԱ «Պատմա-բանասիրական հանդեսի» խմբագրի տեղակալ-պատասխանատու քարտուղար, բանասիրական գիտությունների դոկտոր Ան. Զաքարյանը, ԳԱԱ Երևանի տպարանի երկարամյա տնօրեն Լ. Ազիզբեկյանը, Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի տնտեսագիտության ամբիոնի վարիչ, պրոֆ. Կորյուն Թորոսյանը: Մասնավորապես նշվեց, որ ամսագրի այսօրվա հեղինակությունն ու ընթացքը հենվում է գնահատելի ավանդույթների վրա, որ այդ ընթացքը արժանի շարունակությունն է 1940–1980-ական թվականների ազդեցիկ հայագիտական հանդեսի, որ խմբագրել են հայագիտության և հասարակագիտության այնպիսի երախտավորներ, ինչպիսիք են՝ Ս. Կարապետյանը, Հ. Բատիկյանը, Հ. Օրբելին, Խ. Մոմջյանը, Մ. Ներսիսյանը, Ա. Հովհաննիսյանը, Գ. Ստեփանյանը, Գ. Ասլանյանը, Գ. Աբովը, Հ. Ինճիկյանը, Ծ. Աղայանը, Վ. Միքայելյանը: Տասնամյակներ շարունակ հայ հասարակագիտական մտքի ձեռքբերումները ընթերցող հասարակայնությանը ներկայացվել են նախապես «Լրաբերի» էջերից: Ամսագիրը մշտապես և այսօր, դրսևորում է հանրապետության հասարակագիտական ու հայագիտական մտքի կացությունն ու միտումները: Ելույթ ունեցողները շեշտեցին, որ պարբերականում տպագրված նյութերի ծանրակշիռ մասն արծարծում է հատկապես հայագիտության հանգուցային խնդիրներ: Դրանց շարքում աչքի ընկնող տեղ են գրավում հայ ժողովրդի ծագման ու կազմավորման, հայ հին, միջնադարյան ու նոր շրջանի պատմության, լեզվի, գրականության ու արվեստի հարցերը: Հայ ժողովրդի պատմության կեղծարարների դեմ պայքարի խնդիրը մնում է «Լրաբերի» ուշադրության կենտրոնում: Ամսագրի էջերից 70-ական թվականների կեսերից սկսած, իսկ 1988-ին և հետո արժանի հակահարված է տրվել մեր «հարևանների» ոտնձգություններին: Ամսագրի էջերում տպագրվել են հայագիտական հրատապ հարցադրումներով և նորովի մեկնակետեր պարունակող բազմաթիվ արժեքավոր հետազոտություններ Հայկական հարցի, Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրությունում հայոց եղեռնի, հայկական ինքնապաշտպանական մարտերի և այլնի մասին: Հանրապետությունում հրատարակվող գիտական բոլոր պարբերա-

կանների մեջ «լրաբերը» առաջինն էր և միակը, որ ղարաբաղյան շարժման և ապա ազատագրական պայքարի ժամանակ, 1988–1994 թթ. համալիր հայեցակարգով անդրադարձավ և գիտական համակողմանի քննության ենթարկեց Ղարաբաղի հին ու նոր պատմությունը, երկրամասի սոցիալ-տնտեսական վիճակը, մշակույթի ու արվեստի կոթողները, նրա ժողովրդի արդար պայքարը, Նախիջևանի հայաթափման հարցը, Զանգեզուրի իրավիճակը (1918–1920 թթ.), Բաքվում և Ադրբեջանի հայաշատ այլ վայրերում 1918 թ. ադրբեջանական կառավարության կազմակերպած հայկական կոտորածները և այդ ամենի նկատմամբ խորհրդային ղեկավարների երկդիմի քաղաքականությունը՝ արտացոլված պատմական վավերագրերով և արխիվային փաստաթղթերով – ահա այն առաջնային խնդիրները, որոնք լուսաբանել է և շարունակում է լուսաբանել ամսագիրը: Հանրապետության դիտական մամուլում առաջինը «Լրաբերն» էր, որ նախաձեռնեց հայ ազգային-քաղաքական կուսակցությունների պատմությունն ու գործունեությունը բնութագրող և գնահատող հոդվածների տպագրությունը: Հատկապես նշվեց «Լրաբերի» ներկայիս կարևոր դերն ու նշանակությունը հանրապետությունում հասարակագիտական մտքի անդաստանում: Հանդեսի յուրահատուկ դիմագիծը բնութագրող հատկանիշներից է երիտասարդ գիտաշխատողներին մշտապես հյուրընկալելն իր էջերում, ձգտումը դեպի հիմնահարցերի արդիական ու թարմ ընկալումները: «Լրաբերին» աշխատակցում են նաև արտասահմանի հեղինակներ հայագիտական այլևայլ թեմաներով:

Ելույթ ունեցողները հիշեցին այն տարիները, երբ միմյանց ուրախությամբ շնորհավորում էին «Լրաբերում» տպագրված հոդվածի առիթով: «Լրաբերը» երևույթ էր, այն յուրահատուկ մթնոլորտ էր ստեղծում, ասաց ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն Նիկոլայ Հովհաննիսյանը՝ բարձր գնահատելով հանդեսի ներդրումը արևելագիտության ձևավորման գործում: ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Գ. Անանյանն էլ նշեց, որ «Լրաբերը» իբրև գրականագիտական ամսագրի տեսակ, ֆակուլտետում հաճախ է հոլովվում դառնալով ավարտաճառերի, մագիստրատուրայի ավարտական թեզերի նյութ:

Ջերմ ու սրտառուչ խոսքեր ասվեցին նաև ամսագրի խմբագրության աշխատակիցների մասին, հատկապես շեշտվեց նրանց մարդկային նկարագիրը, պրոֆեսիոնալիզմը, նվիրվածությունը աշխատանքին և հեղինակային կոլեկտիվին:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ